ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՐՑԵՐՈՎ ԶԲԱՂՎՈՂ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ք.Վանաձոր, Հայքի հրապարակ թիվ 1 11.10.2017թ. ժամը 11^{00}

ՕՐԱԿԱՐԳ

1. Տեղեկատվության տրամադրում ՀՀ կառավարության 28.09.2017թ. նիստի N 41 արձանագրային որոշմամբ հաստատված Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման 2018 թվականի տարեկան ծրագրի և ՀՀ կառավարության 07.09.2017թ. նիստի N 38 արձանագրային որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգի մասին: /Զեկ.՝ Հանձնաժողովի քարտուղար Վալերի Ջաղինյան/

2. Տեղեկատվության տրամադրում 2017թ. օգոստոսի 27-30-ը Ծաղկաձորում ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն հաշմանդամ մարզիկ» հանրապետական մրցույթում Լոռու մարզի հավաքականի հաղթական մասնակցության մասին:
/Զեկ.՝ Հանձնաժողովի անդամ Արփինե Մատինյան/
   - Գավաթի հանձնում /ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ Արամ Ռևազյան/,
   - Լոռու մարզպետի շնորհակալագրերի և դրամական պարգևների հանձնում հաղթող թիմի անդամներին /ներկայացուցիչ՝ Ռուբեն Մխիթարյան/
   - Պարգևատրություն /«Լավագույն մարզական ընտանիք» ՀՀ նախագահի մրցանակի բազմակի հաղթող Նազարյանների ընտանիք/

3. Հաշմանդամի սայլակների և Անկախ պետությունների համագործակցության երկրների արտադրության կամ դրան համարժեք լսողական սարքերի ձեռքբերման համար պետական հավաստագրերի տրամադրման գործընթացի կազմակերպման և մարզի պրոթեզավորման ենթակա անձանց շրջանում իրականացված աշխատանքների մասին:
/Զեկ՝ «Երուսաղեմի սուրբ Ղազարի օրդենը Հայաստանում» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ժակլին Հեքիմյան/

4. Կազմակերպության ընթացիկ աշխատանքներն ու ծրագրերը, Լատվիա այցելությունից հետո կազմակերպության ստացած փորձի մասին:
/Զեկ.՝ «Հավասար իրավունքներ, հավասար հնարավորություններ» ՀԿ նախագահ Անուշ Ասլանյան/

5. Հայտարարություններ:
   - Արա Առաքելյան – ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության կողմից 12.10.2017թ. Վանաձորում անցկացվելիք «Աշխատանքի տոնավաճառ» միջոցառման մասին:
   - Վալերի Ջաղինյան - Հայաստանի հաշմանդամների «Փյունիկ» միության և «Եվրախորհրդի չափանիշների քարոզչության կենտրոն» (Ստրասբուրգ, Ֆրանսիա) ՀԿ-ի հետ համատեղ իրականացվող «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական իրավունքների պաշտպանություն՝ հայկական հասարակական կազմակերպությունների կարողությունները զարգացնելու և վերջիններիս Եվրոխորհրդի մոնիտորինգային մեխանիզմներին մասնակից դարձնելու միջոցով» երկամյա ծրագրի շրջանակներում 2017թ. սեպտեմբերի 19-20-ը կայացած կոնֆերանսի մասին:

6. Սպիտակում գործող Հոգեկան առողջության կենտրոնի գործունեության մասին.
   - Տեղեկատվության տրամադրում
   - «Զսպաշապիկի փոխարեն՝ արտթերապիա» տեսաֆիլմի ցուցադրություն. https://www.youtube.com/watch?v=RYyLMBItrvE /15 րոպե տևողություն/

7. Այլ հարցեր: